Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Շախմատի (4դասաժամ) , ՆԶՊ-ի և անվտանգ կենսագործունեության ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. **Հանձնաժողովի անունով գրավոր դիմում**՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է՝ (Չև 1),
2. **Փաստաթուղթ (դիպլոմ)** <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. **Անձնագրի պատճենը**,
4. **Ինքնակենսագրություն** (Չև 4),
5. **Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները** (դրանց առկայության դեպքում),
6. **Մեկ լուսանկար**՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. **ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:**

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15- ին ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոցում. Հասցե Կոտայքի մարզ, գ. Արտավազ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094)62-98-22